**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**2017 թվականի սեպտեմբերի 18-20-ը Չինաստան գործուղման արդյունքների մասին**
**(ՀՀ վարչապետի 2017թ. 26 սեպտեմբերի N 1074-Ա որոշում)**

1. **Անուն, ազգանունը՝**
   Տիգրան Խաչատրյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Պեկին (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն), 2017 թվականի սեպտեմբերի 18-20-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   CITIC Construction Co LTD
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**
   Գործուղման նպատակն էր՝ քննարկել Արմենիան Քափըր Փրոգրամ ՓԲԸ և CITIC Construction Co LTD կողմից Ալավերդու պղնձաձուլարանի արդիականացման ծրագրի մշակման համար այս փուլում առկա հարցերի լուծման հնարավորությունները:

6. **Քննարկված թեմաները**

Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրների, ինչպես նաև տեխնոլոգիաների ընտրություն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Քննարկման ենթակա հարցերի օրակարգում, չինական կողմի նախաձեռնությամբ, քննարկման առարկա դարձան ծրագրի իրականացման ֆինանսավորման կառուցվածքի հետ կապված հարցերը: Ըստ նախնական պայմանավորվածության, ֆինանսավորման հիմնական մասն իրականացվելու է չինական ֆինանսական հաստատությունների փոխառու միջոցների հաշվին:

Չինական կողմի տեսանկյունից՝ այս փուլում ամենակարևոր հարցերից մեկն այն է, որ ՀՀ կառավարությունը հաստատի ծրագրին իր աջակցությունը: Նշեցին, որ դրանից է կախված չինական ֆինանսական հաստատությունների կողմից ծրագրի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների տրամադրման հաջողությունը:

**8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ ծրագրի իրականացմանը ՀՀ կառավարության ֆինանսական աջակցության չափը կախված է լինելու ծրագրային եկամտաբերության կանխատեսվող ցուցանիշներից: Աջակցության եղանակների, ինչպես նաև՝ չափի վերաբերյալ որոշումները կարող են կայացվել այն ժամանակ, երբ հայտնի լինեն այդ հաշվարկային ցուցանիշները:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները և ակնկալվող արդյունքները**

Ծրագրի իրականացման համար տեխնիկատնտեսական հաշվարկները ստանալուց հետո կատարել դրանց ուսումնասիրություն և բավարար տնտեսական արդյունավետության արդյունքում՝ ձևավորել ՀՀ կառավարության եզրակացությունը ծրագրին աջակցության եղանակների և չափի վերաբերյալ:

**10. Գործուղվողը, ստորագրություն, ամսաթիվ**

Տիգրան Խաչատրյան
29.09.2017թ.